

2020թ-ի հունվարի 20-ին
Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում
տեղի ունեցավ հանդիպում-քննարկում

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ԵՎ ԴՐԱՆՑ ԱՊՕՐԻՆԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ
Թեմայով**

Հանդիպում-քննարկմանը մասնակցում էին դպրոցի տնօրինությունը, ՄԿԱ փոխտնօրենը, 8-12-րդ դասարանի աշակերտները, ուսուցիչներ, ծնողներ և ես՝ ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ, ուստիկանության կապիտան Լաիրա Բաղայանը

Հանդիպման սկզբում խոսեցի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարության մասին.

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համաձայն՝ թմրամիջոցների տարածումն ու տարանցումն անմիջական սպառնալիք են ներկայացնում երկրի ազգային անվտանգության համար, իսկ Հայաստանի Հանրապետության մասնակցությունը վերազգային հանցագործությունների, այդ թվում՝ թմրամիջոցների տարածման դեմ միջազգային պայքարին, հանդիսանում է պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում ազգային անվտանգության ապահովմանն ուղղված գործողություն:

Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպումը նպատակ ունի հանրապետության ազգաբնակչությանը զերծ պահել թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությամբ և օգտագործմամբ պայմանավորված թմրամիջոցների բացասական ազդեցությունից և դրա վնասակար հետևանքներից՝ նկատի ունենալով, որ թմրամոլությունը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունը բացասաբար են անդրադառնում մարդկանց առողջության և հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, զգալի վնաս հասցնում երկրի տնտեսությանը, հասարակության անվտանգությանը և իրավակարգին:

Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ անհանգստացնող և բնութագրվում է.

1) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների և այլ իրավախախտումների աճող մակարդակով,

2) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պետական լիազորված մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումների ոչ բավարար արդյունավետությամբ,

3) թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից առաջացող եկամուտների օրինականացման դեպքերի բացահայտումն ու կանխարգելումն իրականացնող պետական իրավասու մարմինների միջև թույլ փոխհամագործակցությամբ,

4) թմրամոլությամբ տառապող անձանց կանխարգելիչ, բժշկական և վերականգնողական օգնության կազմակերպման անբավարար մակարդակով,

5) թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության և վերականգնողական համալիր համակարգի բացակայությամբ,

6) թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների կազմակերպված ձևերի դեմ պայքարի անբավարար արդյունավետությամբ,

7) ազգաբնակչության, այդ թվում՝ անչափահասների և երիտասարդների, ինչպես նաև բնակչության առավել խոցելի խմբերի շրջանում թմրամիջոցների ապօրինի օգտագործման կանխարգելմանն ուղղված միջոցառումների չհամակարգված և ոչ հետևողական բնույթով:

Անչափահասների և երիտասարդների, ինչպես նաև բնակչության առավել խոցելի խմբերի շրջանում թմրամիջոցների ապօրինի օգտագործման կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին

Հենց այս այս հարցի շուրջ տեղի ունեցավ բուռն քննարկում, որի ընթացքում անչափահասները ներկայացնում էին իրենց հուզող հարցերը, ընդունում հնարավոր վտանգները, առաջարկում կանխարգելման մասին իրենց մոտեցումները:

Հարցը շատ մտահոգում էր նաև մասնակցող ծնողներին, ովքեր իրենց պատրաստակամությունը հայտնեցին օգնել, օժանդակել մեզ:

Հանդիպման ընթացքում ցուցադրվեցին տեսանյութեր, կատարվեցին վերլուծություններ:


Օրգանիզմի վրա հոգեմետ նյութերի ազդեցության մասին կենսաբանության ուսուցչի կողմից տրվեց գիտական վերլուծություն:

Մասնակիցները շատ կարևորեցին դասերից հետո , հանգստյան օրերին անչափահասների զբաղվածության խնդիրը, որպես կանխարգելման կարևոր միջոց:

Բոլոր կետերը ներկայացնելուց հետո ես լսեցի և պատասխանեցի ավագ դասարանների աշակերտների բոլոր հարցերին:

Բացատրական աշխատանքների արդյունքում՝ երեխաները տեղեկացվեցին ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ դեմ կատարվող բոլոր պատժելի և խրախուսելի միջոցառումների մասին:

Զեկուցող՝



ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ,
ոստիկանության կապիտակ
Լաիրա Բաղայանը